ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2

09.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/4-1>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան <<_____>>_____ 20___թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<<<Պրոգրես լայն>> ՍՊԸ և <<Էլեկտրոլուչե>> ՍՊԸ>> ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ-ը,** ի դեմս Կոնսորցիումի առաջատար գործընկեր **<<Պրոգրես լայն>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Ադիբեկյանի**, որը գործում է համատեղ գործունեության իրականացնելու մասին պայմանագրի և Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 09.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/4-1>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 09.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/4-1>> գնման պայմանագրով սահմանված <<ԳՆՈՐԴԻ>>-ի բանկային վավերապայմանները շարադրել հետևյալ խմբագրությամբ. **ՀՀ ՖՆ ԳՎ, Հ/Հ 900132000036:**

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
Չարենցավան համայնք	**<<<<Պրոգրես լայն>> ՍՊԸ և**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան	**<<Էլեկտրոլուչե>> ՍՊԸ>>**
հրապարակ թիվ 1	**ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ**
ՀՀ ՖՆ ԳՎ	**ք. Հրազդան Կենտրոն 10/36**
Հ/Հ 900132000036	**<<Ինեկոբանկ>> ՓԲԸ**
ՀՎՀՀ 03022497	**Հ/Հ 2050722016301001**
	ՀՎՀՀ 03020371
	էլ. փոստ՝ progressline@inbox.ru
	հեռ. (094) 19-92-90
Համայնքի ղեկավար՝	
Հ. Կ. Շահգալդյան	**Տնօրեն՝ Ա. Ադիբեկյան**
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**
Digitally signed by SHAHGALDYAN HAKOB 1101740744 Date: 2019.02.22 14:19:17 AMT	Digitally signed by ADIBEKYAN ARA 1708930272 Date: 2019.02.22 13:33:22 AMT